



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3473

Գաղտնիք

Կառույց

618.2

9 - 24

Կ. Պոլիս

1872

400

ԳԵՂՅԻՆՔ

ԿԱՆԱՆՅ

ԹԱՐԳՄԱՆՈՒԱՄ

ՉՈՐՍ ՀԱՐԻԻՐ ՏԱՐՈՒԱՆ ՁԵՌԱԳՐԷ

ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ԱՆՈՒՆ

ՀԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՄԸ ՅՐԻՆԵԱԼ



2002

2010

618.2
9-24

ՍՏԱՆՆՈՒՊՈՒՄ

1872

618.2

Գ-24

W

Գ Ա Ղ Յ Ն Ի Գ

Կ Ա Ն Ա Ն Յ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Ա Ն

Չ Ո Ր Ս Հ Ա Ր Ի Ի Բ Տ Ա Ր Ո Ւ Ա Ն Ձ Ե Ռ Ա Գ Բ Է

Յ Ո Հ Ա Ն Ն Է Մ Ա Ն Ո Ւ Ն

Հ Ա Յ Ա Ր Բ Ե Պ Ե Ս Կ Ո Պ Ո Ս Է Մ Ը Յ Ո Ր Ի Ն Ե Ա Ղ



Կ Ո Ս Ա Ն Կ Ն Ո Ւ Պ Ո Ւ Ի Ս

1872

16597

Սիրելիդ իմ .

Թեպէտ քու թախանձելէդ ստիպեալ ձեռք
դարկի՝ կանանց գաղտնեաց յիրայ գրել , բայց
թեթեւաբարոյ մարդոց տկարութեանը նայելով
կը վախնամ , թե դուցէ քու բաղձանքդ կատա-
րել ուզելով՝ ուրիշներուն նշանթագրութեան ա-
ռիթ տամ : Ուստի կը խնդրեմ եղբայրս թէնէդ ,
որ իբրև հաստատուն ծառայ Գրիստոսէ , ողջա-
խոհ ականջով , ամբիժ մտօք և անյողդողդ սրբ-
տիւ կարդաս , ինչ որ քեզի կը դրեմ , և չհաղոր-
դես զանոնք ծանծաղամիտ և վաւաչոտ մարդոց :

Երեքտասան յօդուածով պիտի յայտնեմ
քեզ այս մասին համառօտիւ ինչ որ գիտեմ շատ
կարևոր է :

7250-57

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Կ Ա Ն Ա Ն Յ



Ա . Յ Ղ Ա Յ ՈՒ Մ

Ա մեն ծննդականութեան առաջին հեղինակին Աստուած , ինչպէս բոլոր շնչաւորաց , նոյնպէս մարդուն մէջ բնածին ախորժակ և բերում մը տընկած է , որով նորա անդիմադրելի զօրութեամբ կ'երթան յորդեծնութիւն , այն է իրենց նմաններն յառաջ բերելու , որպէս զի ցեղերը սերելով մշանջնաւորեն : Ինչպէս բոլոր բնագէտը կը վըկայեն , սերումը կամ ծնունդը , յառաջ կու գայ արուին սերմէն և իղին գաշտանէն . քանզի , ի զուգաւորութեան , արուն՝ սերմը , և էգը գաշտանը կը հեղուն . և այս երկու բնութիւններն իղին արգանդը հոսելով , իբարու հետ կը խառնուին և կ'ամփոփուին իսկոյն շուրջանակի , բընական իմն սեղմմամբ արգանդին , որպէս զի սաղմին կամ զաւկին ստեղծմանը համար կազմուած այն հիւթը չցրուի : Երբ արգանդն այս վիճակին մէջ է , կ'ըսուի թէ էգն յղացաւ :

Բ . Ս Ա Ղ Մ Ի Ն Կ Ե Ր Պ Յ Ի ՈՐ ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Սրգանդին մէջ զետեղուած այն խառնութիւնը վեց օրէն սպիտականալով կաթի որպիսութիւն կը ստանայ արուին սերմնական զօրութեան զործ երովը : Վեց օրէն հաւրը սպիտակ հիւթը կը

կօխ կաշկերէլ, և աշեան որպիսու թիւն կ'առնէ մինչև ինն օր, Յետ այնորիկ կսկսի մածնուլ, այսինքն թանձրանալ և պնդիլ մինչև յղաշման երկուտասաներորդ օրը : Այն ատեն հիւժը կենդանանալով, այսինքն՝ ըստ աստուած արանից ընդունելով Աստուծ մէ ստեղծուած հողին, կ'ողեւորի : Այս է սաղմը որ դեռ անկերպարան զանդուած մը ըլլալով կը սկսի իւր բնական զօրութեան օրինօք հետզհետէ կերպաւորել, այսինքն ձև կամ կերպ առնուլ :

Գ. ՄՈՒՈՐԱԿԱՆ ՍԶՆԵՅՈՒԹԻՒՆԸ,

Երեւակը որ մթաղոյն և յամր է և դեր ՚ի վերոյ քան զայլ մոլորակս՝ թխագոյն կ'ընէ ծընունդը . մաղերը ստուար, սեւաղոյն և կարծր, գլուխը բոլորակ, մօրուքը խիտ, կուրծքը բարակ, Ասիկայ ըստ մարմնոյն է . իսկ ըստ հողւոյն, կ'ընէ ծնունդը խտապարանոց, չարաբարոյ, զայրացիտ, տեսքով վատթար, զաղիր բաներ և գծուծ զգեստներ սիրող, բայց ոչ բղջախոհ, այլ վաւաշտու թիւնն ասող :

Ղուսնթագը որ է ասող արքունական, բարի, քաղցր, սլայծաւ, բարեխառն և բարենշան՝ ծընունդը կ'ընէ գեղեցկատեսիլ, աչուրները՝ սլայծաւ, մօրուքը՝ թաւ, բոլոր անդամները՝ մեծագոյն և համեմատ, երեսը՝ սպիտակ և կարմրախարն, մաղերը՝ երկայն : Այս՝ ըստ մարմնոյն . իսկ ըստ հողւոյն՝ կ'ընէ ծնունդը բարի, համեատ, պարկէշտ, երկայնակեաց, զարդարանք և վա-

յելուչ զդեատներ, համադամներ և անուշ կերակուրներ սիրող . դարձեալ՝ ողորմած, առատաճեուն, մարդասէր, առաքինի, ճշմարտախօս, ոչ խառնադնայ և յայրարատ :

Հրատը որ ոչ բուական ջերմ է և չոր՝ կ'ընէ ծնունդը կարմրագոյն և ցորենամորթ . մաղերն անօսր և անդայտ . աչուրները մանր, հասակը կարճ և ստուարագոյն . և ըստ մարմնոյ : Իսկ ըստ հողւոյն կ'ընէ ծնունդը խաբեբայ, անհաստատ, անամօթ, բարկայոյղ, մատնիչ, խռովաշոյղ և կռուասէր :

Արեգակը որ նոյնպէս ասող է արքունական, լուսատու և ակն աշխարհի՝ կ'ընէ ծնունդը մեղերեսները գեղեցիկ, աչուրները վարվար, գոյնը սպիտակ և կարմրախառն, մօրուքը բարեձև, մաղերը երկայն : Այս ըստ մարմնոյ . իսկ ըստ հողւոյ՝ կ'ընէ ծնունդը կեղծաւոր, բայց և արգար և բաղմաղէտ . ըստ կարծեաց ոմանց նաև սրբակեաց, ջերմեանդ, իմաստուն, մեծանճն, բարեսէր և չարատեաց :

Ղուսաբերը կամ արուսեակը որ հաճոյական ասող է՝ ծնունդը չքնաղ . աչուրները մեծամեծ և ծախ, արտեւանունքը գեղեցկայարմար, հասակը չափաւոր . և այս ըստ մարմնոյն : Իսկ ըստ հողւոյն՝ կ'ընէ փաղաքշտ, մարդահաճոյ, քաջաբան և համադախօս . երաժշտութեան, ըլբօսանաց, խնդութեան, կաքաւման և մարմնոյ զարդուց սիրող :

Փայլածոյն կ'ընէ ծնունդը վտիտ և մանր .

մօրուքը փոքր և զեղեցիկ . և այս ըստ մարմնոյ :
 Քստ հողւոյն՝ կընէ ծնունդը նրբամիտ , իմաս-
 տուն , ուսմանց և գիտութեանց սիրող . բարե-
 բարոյ և կատարելախօս , ճշմարտաբան , գիւրա-
 հուան , հաւատարիմ , համակարծիք , չարակն ,
 այլ ոչ մասնակից չարակամաց :

Լուսինը որ ուրիշ երկնաւոր մարմիններէն
 վար է՝ կընէ ծնունդը ճշմարտաբան , բայց վը-
 տարանգի և թափառական , անյարմար պաշտա-
 մանց , կարճահասակ , և չարի՞ գիւրահաւան :

Գ. ՍԱՂՄԵՐՈՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Սաղմերը բաղմապատիկ ըլլալուն պատճառը
 երեք է : Ստիկա յառաջ կու գայ նախ արուին
 սերմերուն արդանդին այլեւայլ ծալուածներուն
 մէջ բաժնուելէն : Ըստ այսմ աղնուական կնոջ
 մը համար կըսուի թէ 365 կենդանի և ամբողջ
 դասկներ ծնաւ , բայց շատ մանր և վտիտ :

Երկրորդ յառաջ կու գայ սերման առատու-
 թեանէն . ուստի կըսուի կնոջ մը համար թէ մայ
 դանդուած մը ծնաւ , մարդու կերպարանքունէր :

Երրորդ պատճառն է եզին յաճախ զուգա-
 ւորութիւնը , որմէ սաղմերու բաղմապատկութիւ-
 նը յառաջ կու գայ : Պէտք է գիտնալ որ , եթէ
 ծնողաց խառնուածը շիկամաղցոտ , ջերմ և չոր
 է , անկէ ծնածը կըլլա երկայն , բարակ և վտիտ .
 եթէ ծնողը մաղասոտ , ցուրտ և գէճ են ընու-
 թեամբ , ծնածը կըլլայ կարճ և ստուար . եթէ

մեղամաղճոտ , ցուրտ և չոր են , ծնածը կըլլայ
 կարճ և բարակ : Պէտք է գիտնալ նաև որ շիկա-
 մաղցոտը սովորաբար քրքրեալոյն կըլլայ , արիւնու-
 տը՝ կարմրագոյն , սեւամաղցոտը՝ թքաղոյն , և
 մաղասոտը՝ սպիտակագոյն : Աւ թէպէտ կանա-
 յածնաց մէջ զուտ շիկամաղճոտ կամ մաղասոտ
 կամ արիւնոտ չկայ , այլամէնքն ալ ասոնցմէ խա-
 ուն են , բայց և այնպէս մաղձին կամ մաղասին
 առաւելութեանը կամ նուազութեանը նայելով
 կըսուի մաղճոտ կամ մաղասոտ կամ արիւնոտ :

Ե. ՀՈԳԻՈՅՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԾՆԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Բնական հոգին երեք զօրութիւն ունի ,
 աշինքն՝ աճողական , զգայական և իմացական ,
 քանզի իզին արդանդը հոսող արական սերմը , իր
 մէջ սննդական զօրութիւն ունենալով , կըսկսի
 շուտով աճիլ . յետոյ ընութեանէն կը շնորհուի ա-
 նոր զգայական զօրութիւն որ սննդականէն կը
 տարբերի գործոյն և առարկային կողմանէ և ոչ
 ըստ էութեան . վերջապէս կստանայ նաև իմա-
 յական զօրութիւն՝ ոչ իրմէ այլ երկինքէն : Ուս-
 տի սաղմը կապրի նախ անկական յետոյ զգայա-
 յական և ապա իմացական զօրութեամբ :

Առաջինը ծածուկ կեանք կըսուի . երկրոր-
 րը՝ յայտնի և երեւելի , իսկ երրորդը կը կոչուի
 դերաղանց և փառաւոր կեանք :

Առջինէն սաղմին մէջ կը զարթնու զգայու-
 թիւն բուսական , երկրորդէն՝ զգայութիւն կեն-

դանական, և երրորդէն զգայութիւն իմացական կամ հոգեկան :

Մնանելու ժամանակն՝ իդին կազմուածին զանազանութեանը նայելով այլեւայլ է : Ոմանք, ըստ հասարակ սովորութեան ինն ամսէ կը ծնանին . այլք ութերորդ կամ եօթներորդ ամսուն . տոմներորդին մէջ անգամ ծնանողներ կան : Երբեմն կը պատահի նաև որ վեցերորդ ամսուն մէջ կը ծնանին , բայց ասո՛ր անշուշտ կամ վիժած կը համարուին , քանզի այս ամսուան մէջ ծնածը գանդուած մնոյ է մանաւանդ քան թէ կազմուած մարդ : Եւ ատիկա այլեւայլ պատճառներէ կ'ըլլայ . նախ դաշտանին ապականութենէն և նեխտելոցնէն . երկրորդ՝ ստեպ շարժելէ կամ ցատկելէ . երրորդ՝ վախէ , չորրորդ՝ կայմակի պատճառաւ , հինգերորդ՝ հարուածէ կամ ընդհարմանէ և ասո՛նց նման բանի շարժմունքէ . եօթներորդ՝ սաստիկ ուրախութենէ կամ սոստիկ տրտմութենէ . ութերորդ՝ բանի մը վերջին աստիճան ախորժակ ունենալէ :

Գարնանալի է սաղմին մնանելն արգանդին մէջ : Անդամական զօրութեան ներդրոճելովը սաղմին պորոտէն երակ մը կ'ելլէ , և իդին արգանդէն անցնելով կ'երթայ մշտեւ մօրը ստիկքը : Այն միջոյնն արգէն իդին դաշտանը , արգանդին ամփոփմանը պատճառաւ , ստեանց մէջ կը ծորէ և կը կարծրայնէ զայն , և եկուելով հոն կը ըստիտականայ ու կաթի կը փոխուի , և սպա վերջիչեալ երակին կամ խղովակին միջոցաւ գա-

լով կը սնուցանէ սաղմը : Այս այն խղովակն է զոր մանկաբարձք ծննդեան տոնը կը կորենն :

ՅՈՒՅԱՆՔ ԿՈՄ ՀՐԵՐ

Յուցանքը շատ պատճառներէ կ'ըլլայ : Նախ սերման նուաղութենէ : Երբ սերմը չափէն աւելի նուաղ է , բնութիւնը որ նախ գլխաւոր և հարկաւոր դորձարանները կըլիւլմէ և կը կերպուորէ , զարգինակ՝ սիրոշ , թօքը , ուղեղը , ամօրձիքը , եւ այլն , երբ յետոյ կը սկսի միւսանդամները ձեւայընել , բաւական նիւթ չը տնելով ասոնց համարցանք յառաջ կ'ը բերէ , այսինքն՝ միաձեւանի , միտանի , չորեքմատնէայ ականջատ , ընչատ Երբեմն թերութիւնն աւելի անփաս կ'ըլլայ , զորօրինակ՝ մէկ բաղուկը միւսէն կայծ կամ փոքր կ'ըլլայ , կամ մէկ ոլքը միւսէն կարծ , այլովքն հանդերձ ,

Երկրորդ՝ արգանդին մէկ թերութենէն . զորօրինակ՝ երբ իդին արգանդը խոցոտ և անմաքուր ըլլալով , արտիան սերման ներս հասած տոնը չի կրնար զայն ըստ արժանոյն յինքն ամփոփել , և կամ եթէ ամփոփէ եւս , անապրութեանը համար անկէ մաս մը դուրս կը ծորեցնէ . և այսպէս բնութիւնը հարկաւ ցուցանք յառաջ կը բերէ :

Երրորդ և ընդհակառակն . կ'ըլլայ սերման չափագանց առատութենէն . քանզի բնութիւնը որ դորձունեայ է բոլոր դորձարաններն ու անգամները կերպուորելէն ետքը , դեռ բաւական նիւթ գանելով , կը սկսի դորձարանները կամ մարմնոյն

մասերը զնդել, ասկէ կ'ընայ սահմը երկգլունի
երեւք բաղկեան, վեցմատնեայ, սառածաւոր կամ
կուղ, երկամթեայ, այլովքն հանդերձ :

Չորրորդ կ'ըլլայ անկարդ և անտեղի զուգա-
ւորութենէ : Ասկէ խեղ և միակողմանի ծնունդ-
ներ յառաջ կուգան :

Իննագեաներէն ումանք կ'ըսեն թէ, եթէ սերմն
արգանդին աջակողմն ի յնայ, կամ եթէ անմիջա-
պէս զկնի սերմնառութեան էգն աջ կողմին վրայ
ընկողմանեմ, արու յառաջ կուգայ . եթէ սերմն
արգանդին ձախակողմն ի յնայ, կամ սերմնառու-
էգը ահեկին վրայ պառկի, էգ կը դոյանայ . իսկ
եթէ սերմն արգանդին ճիշդ մէջտեղն ի յնայ, եր-
կամթե կամ որձէք կը ծնանի :

Չ . ԻԳԻՆ ՅՂԱՅՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Եթէ էգը զուգաւորութենէն ետքը յուրա ըլ-
լայ կամ զաւրովագոյն մարմնոյն այլեայլ կող-
մերը, յգացման նշան է . և ասոր պատճառը սա
է, որ յղանալէն ետքը՝ բնական ջերմութիւնը
թողլով արիշ անգամները կը վազէ արգանդը :
սահմը կաղմելու համար :

Յղացման նշան է ևս, եթէ զուգաւորութեան
ատեն արուին գործին իղին արգանդին կողմէն
կը քարշուի և կը սեղմուի . քանզի յղացող ար-
գանդը բնական զօրութեամբ մը կը սեղմէ գործին
սերման նիւթը կաաարեւապէս ընդունելու համար :

Յղացման նշան է գարձեալ, եթէ էգը յետ

զուգաւորութեան, ստէպ կ'ախորժէ այն գործու-
ղութեան կրկնումը, և պատճառն է արգանդին
մէջ արդելուած դաշտանը որ ներքուստ կը դրդէ
այն ախորժակը : Նոյնպէս յղացեալ է մանաւանդ-
եթէ յետ զուգաւորութեան ըստ սովորութեան
ժականակին չի վիժեր դաշտանը, ասոր ալ պատ-
ճառն յայտնի է, քանզի յետ յղացման դաշտանը
կը սկսի ստինքը հոսել ՚ի սնունդ սաղմին :

Գարձեալ՝ յղուոյն երեւին դոյնը յետ զուգա-
ւորութեան կ'այլայլի, կը փոխուի, և անընդեւ ու
այլանդակ բաներ կ'ուղէ ուտել, զորօրինակ գոր-
ծելի, հող, և ուրիշ սսննց նման բաներ . և պատ-
ճառը սա է, որ յղանալէն ետքը խոժոռ և ան-
մարտական գիճութիւններ ուղեղը կ'ընթանան, և
իրենց նման խոժոռ և անմարտական բաներու ա-
խորժակ կը շարժեն :

Ը . ԱՐԳԱՆԴԻՆ ՄԷՋ ԶԵՏԵՂԵԱԼ ՍԱՂՄԻՆ
ԱՐՈՒ ԿԱՄ ԷԳ ԸԼԼԱԸԼԸ

Եթէ յղութեան ժամանակին մէջ, իղին ե-
րեսնն գոյնը կարմիր է, և շարժումը թեթեւ,
յղացեալն արու է, և կարմրութեան նշանն ար-
գանդին ջերմութիւնն է, քանզի աւելի է ջեր-
մութիւնը, երբ յղացեալն արու է :

Եթէ իղին սրովայնը գնդաձև է՝ աջ կողմէն
ուսուցեալ, արու է ծնունդը . պատճառն ալ սա
է որ արուն միշտ աջ կողմը կը բնակի ուր ջեր-
մութիւնն ու զօրութիւնն աւելի է :

Եթէ ստեանց կաթը թանձր և զուտ է, այն-

պէս որ արծաթեղէն կամ ապակեղէն մաղուր տնօթի մը վրայ կաթելով չի պտղիր կամ զեղանիր այլ հաստատուն կը մնայ : արու է սաղմը : Ասոր ալ պատճառը դարձեալ արուի նշան ելող աւելի շերմութիւնն է , որ կաթը կ'եփէ և կը սնդէ :

Եթէ յը ոյն կաթը կամ արեան մէկ կաթիլը որ ալ բազլէն կը վազէ՝ մաքուր ջրոյ մէջ կաթեղով իսկոյն յատակը կ'իջնէ , սաղմն արու է . իսկ եթէ ջուրին երեւը կը մնայ էգ է :

Նոյնպէս եթէ յը ոյն ալ ստինը մեծ է , մանուկն արու է . իսկ եթէ ձախ ստինն է մեծ , էգ է :

Եթէ ստեան պտկանը վրայ փսոր մը աղ գրուի և աղը գիճանալով հալի , էգ է տղան . իսկ եթէ մնայ արու է . և ասոր պատճառը մէկին ցրտութիւնը և միւսին շերմութիւնն է :

Գարձեալ եթէ յլին քակելու ատենը նախ աջ ոտըը շարժէ , մանուկն արու է . իսկ եթէ ձախը շարժէ , էգ է :

Եթէ տարակոյս կայ թէ սրդեօք կին մը յղի է թէ ոչ անոր մեղրաջուր խմցնելու է . եթէ պորտին վրայ ցաւ կը զգայ , նշան է թէ յղի է . իսկ եթէ չզգար , յղի չէ : Բայց մեղրաջուրը կազմելու է երկու տարզալ ջուրէ և մէկ տարգալ մեղրէ :

Թ . ԿՈՒՍՈՒԹԵԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ

Կուսութեան խախտելուն անմիջական նշանն արդէն դէթէ առհասարակ գիտյուած է , այ-

մինքն , շարոյրին որ է կուսական թաղանթը՝ խզումը և բշական մը հերձումը որմէ կը հոսէ արինն : Իզին որ արու գիտէ՝ ամեղը (գործարանը) իր ամբոյժութիւնը կորսնցնելով կը թուլանայ և կ'ընդարձակի , և կը մնայ բայ , այնպէս որ այնպիսիք ՚ի խոնարհ կը միզեն :

Գարձեալ կուսութիւնը կորսնցնողին մէզը դաժանու թիւն ունի , այնպէս որ այնպիսիք եթէ մատաղ մուշի վրայ միզեն , տունկն իսկոյն կը թարշամի : Այնպիսեաց բազափուշան ալ թոյլ է : Եթէ կաթսակայ խտրին պտուղն ամուսնացելոյ կամ կուսութիւնը խախտելոյ մը համքը գրուի , շուտով կը միզէ :

Ժ . ՅՂԱՅՄԱՆ ՈՐԳԵԼՈՒՄԸ

Յղացումը խախտող պատճառներն այլևայլ են : Ասիկայ կը պատահի երբեմն արգանդին սաստիկ զիճութենէն , կամ սաստիկ ցրտութենէն և կամ չափազանց չորութենէն : Երբեմն ալ կարի գիրութենէ , քանզի պարարտութիւնն արգանդին բերանը բռնելով կը սեղմէ և կ'անձկացընէ , ու չթողուր սերման ներս հասել . ուստի և յետ զուգաւորութեան՝ սերմը միզուածին հետ դուրս կը վիժի , այնպէս որ եթէ յետ զուգաւորութեան այսպիսի իզի մը միզուածը գիտուի , սերման նիւթը յայտնի կը տեսնուի : Կան էգեր որոնց արգանդն այնպէս լայրժ և նիհար է որ սերման նիւթը չի կրնար ըմբռնել և պահել :

Յղացման արդեւքն ալ ուրիշ կազմէն ալ կրնայ

բլլալ, զորօրինակ՝ եթէ սերման նիւթը շատ ա-
նօսը և ջրի է, զուգաւորութենէն ետքը իսկոյն
կը վիժի: Եւ եթէ աւորձիքը ջրոագոյն են, ա-
նոնց մէջ եւիւած սերմը որդեծնութեան անյար-
մար է:

Ստուղին իմանալու համար թէ ամուսնութեան
պատճառն արուէն է թէ իգէն, պէտք է առ-
նուէր երկու պոյտ, մէկուն մէջ դնել արուին միգ-
ուածը և միւսին մէջ իգինը, և անոնց մէջ քիջ
մը թեփնետելէն ետքը զգուշութեամբ գոցելու
է մինչև ինն օր կամ քիչ մը աւելի: Յետոյ բա-
նալով նայելու է. եթէ արուին պուտանը մէջ որ-
դունք կամ ուրիշ ժժմունք կը տեսնուին, յղաց-
ման արգելքն արուէն է: Իսկ եթէ հոն այսպիսի
բան մը չկայ, և իգին միզուածին մէջ դաշտան
կը տեսնուի, ամուսնութենն իգէն է. և եթէ երկու-
քին մէջ ալ բոլորած նշանները կը տեսնուին ամ-
ուսնութեան պատճառը երկուքէն ալ է:

Պէտք է դիտնալ որ, եթէ կինը երեք օր ա-
տամնախրտի ջուր ըմպէ, երբէք չի յղանար նոյն-
պէս եթէ արուին միզուածն ըմպէ, յղացումը
կ'արդիւրի: Իարձեալ պէտք է դիտնալ որ, ե-
թէ ամուսնը մը կուզէ յղանալ և ծնանել զաւակ ա-
բու, թող առնէ էգ նապաստակի արգանդն ու
փորոտիքը, և չորցունելով լուայ, և ապա դին-
ւոյ հետ խառնելով խմէ դաշտանին դադրելէն
ետքը: Այնուհետև եթէ զուգաւորի, կը յղա-
նայ: Սոյն ներդործութիւնը կընէ արու նապաս-
տակի ամորձիքը: Եւ կամ այժեման բուրդէ հիւս-

ուած դօտի մը առնելով իշու կաթին մէջ թրջէ
և պորտին վրայ կապէ, նոյնպէս կը յղանայ: Իար-
ձեալ եթէ կոճղոյ, այինքն խոյոյ լեարդն ու ամոր-
ձիքն առնելով չորցունէ և լուայ, և դինւոյ հետ
խմէ ինքն ու այրը, և ապա զուգաւորի կը յղանայ:

Ժ. ՍԵՐՄԱՆ ՅԱՌԱՋ ԳԱԼԸ

Մարսողութիւնը չորս է. առաջինը՝ ստամոք-
սին, երկրորդը՝ լերդին, երրորդը՝ սրտին և չոր-
րորդը երակներուն մէջ: Նախ կերակուրը ստա-
մոքսին մէջ մարսուելով կը բաժնուի. մաքուր
հիւթը կ'երթայ լեարդը, և անմաքուրն աղիքը
մղուելով դուրս կը հերքուի:

Երկրորդ և տեսակ մը մարսողութիւն ալ կըլ-
լայ լերդին մէջ, հոն ալ մաքուրն անմաքէն բաժ-
նուելով, մաքուր մասը կ'երթայ սիրտը, և անմա-
քուրը բաղախուշտը կ'ուզուի և դուրս կը միզուի:

Երրորդ տեսակ մարսողութիւնը կը կատարուի
սրտին մէջ. մաս մը մարսողական հիւթէն որ ա-
րիւնն է՝ կը հոսէ երակներուն մէջ, իսկ ուրիշ մէկ
մասը կ'երթայ ամորձիքը, ուր կը փոխուի ՚ի
գերմն:

Չորրորդ տեսակ մարսումը կըլլայ երակնե-
րուն մէջ. սննդական մասը երակային խողովակ-
ներով բոլոր մարմնոյն մէջ տարածուելով կը թանձ-
բանայ և կը փոխուի ՚ի միս և յայլ նիւթս մարմ-
նոյ. իսկ սննդական մասը մարմնոյն վիժակներէն
և ծակտիներէն դուրս կը ցնդի:

Հ. 0. 5. 27

Առաջին ամսուան մէջ Երեւակի աղբեցութեամբ, որ է յերմութիւն և շրտութիւն, կը մահնու և կը պնդի սերման նիւթը, ու դատողութեան և խոհարարութեան յարմար ըլլալու կը պատրաստուի :

Երկրորդ ամսուան մէջ Լուսնիթագին աղբեցութեամբ, որ է ջերմութիւն և գիճութիւն, առաջին ամսուան մէջ Երեւակի աղբեցութեամբ մածուած և պնդուած սաղմը գործարանաց ձեւ կ'առնու, և կը պատրաստուի այլևայլ բարոյական յատկութեանց յարմար ըլլալու, զորօրինակ երկայնմտութեան, հեշտութեան, այլովքն հանդերձ :

Երրորդ ամսուան մէջ Հրատի աղբեցութեամբ որ է ջերմութիւն՝ գործարաններու ձև ընդունող սաղմը կ'առնու անբամներ, բաղուկ, պարանոց, գլուխ, այլովքն հանդերձ, և կը պատրաստուի յարմար ըլլալու զբացողական շարժմանց, ախարժակաց և կարեաց :

Չորրորդ ամսուան մէջ Արեգական աղբեցութեամբ սաղմը կ'առնու դէմք և կերպարանք, և կը պատրաստուի յարմար ըլլալու ճանաչողութեան և յիշողութեան :

Հինգերորդ ամսուան մէջ Լուսաբերի կամ Արուսեկի աղբեցութեամբ սաղմը քանի մը զգայունք կամ արտաքին գործարաններ կ'ստանայ, զորօրինակ՝ ականջը, ունչք, բերան, դարձեալ

ժարոց, համք և ստինք. և կը պատրաստուի յարմար ըլլալու ցանկական զօրութեան. դարձեալ ստուընեքն ու ձեռուընեքը կը զատուին և անոնց մատուընեքը կ'որոշուին :

Վեցերորդ ամսուան մէջ Փայլածուի աղբեցութեամբ սաղմը կ'ընդունի արտաքին ըմբռնմանց կամ գաղափարաց գործարաններ կամ ըզգայարանք անոնց վերափեքեալ մասերը, զորօրինակ՝ ձայնի գործարաններ, ճաշակելեաց գործարաններ՝ կոկորդ, լեզու, քիմք, ատամունք և շրթունք. տատանելեաց գործարաններ, զորօրինակ՝ աչք, արտեւանունք, դարձեալ մազերն ու եղունքները կ'աճին, և կը պատրաստուին յարմար ըլլալու խնդական կամ հրճուողական զօրութեան :

Յօթներորդ ամսուան մէջ Լուսնի աղբեցութեամբ որ է խոնաւութիւն՝ սաղմին մարմնոյ թերութիւնները կը լեշուին, և ինք կ'առոյգանայ և կը պատրաստուի յարմար ըլլալու աճողական և ուրիշ բնական զօրութեանց :

Ութերորդ ամսուան մէջ դարձեալ Երեւակի աղբեցութեամբ որ է շրտութիւն և յրատութիւն պաղութեան և ցամաքութեան միճակի մէջ կը դատուի սաղմը. ուստի ըստ կարծեաց աստեղագիտաց այս ամսուան մէջ ծնանք՝ կամ մեռած կ'ըլլայ և կամ ծնանելէն ետքը չուտով կը մեռնի :

Ինններորդ ամսուան մէջ դարձեալ Լուսնի թագէ աղբեցութեամբ որ է ջերմութիւն և գիշտութիւն՝ կը դալարի և պարարտանայ սաղմը :

ուտի և՛ այս ամսուան մէջ ծնած մանուկը կըլ-
լայ աւոյգ, առողջ և երկայնակեաց, եթէ ար-
ծագին պատճառներ ՚ի ընդմիջեմէ կամ ՚ի մարդ-
կանէ չխանդարեն այն բարենշան վիճակը :

Պէտք է գիտնալ որ աստեղանշմարք սաղմին
մարմնոյ գործարաններն ու անդամները կ'ըն-
ծայեն երկրտասան կեդանակերպից . զորօրի-
նակ գլուխը որ է արմատ հոգւոյ՝ կընծայուի խո-
յոյ որ Արեկան մտնելու ատենը շերմ և գէճ
է . պարանոցը՝ Յլուն, բազուկները ու ուտերը՝
Երկաւորին . կուրծքն ու ստամոքսը՝ Խեցգետնին .
սիրտն ու փաղձաղն՝ Առիւծուն . փոքրափորը՝
Կուսին . երիկամունքը՝ Աշուղն . ամորձիքը՝ Կար-
ճին . ձեռուրներն՝ Աղեղնաւորին . ծնկուրներն՝
Սյծեղջեր . ոնդունքը՝ Զրհուսին . ոտուրները
Զկան :

ԺԲ . ՍԵՐՄԱՆ ՇՅՏՆԱԼԸ

Սերմը կը շատնայ հետեւեալ կերպ՝
չողգամով, դալար (թաղէ) մսով հաւու
և որթոյ . ծուօք և ձիթով . թերխաչ գալստ բակ-
լայիւ և սալամբ, ոտարհիւք, և մանաւանդ
բահամ գինով : Իսկ կը նուազի հեա-
րակրովք . աղծեալ և ապխտեալ մսով
օթեկ հացիւ, չոր հացիւ, չոր բանջարօք կամ
խաւարտիւ, պահովք և ծախիւք, և
ճրթափուխեամբ :

3473

24



Handwritten text in Armenian script, partially obscured by a piece of tape. The text is written in a cursive style and appears to be a list or a set of instructions.

2013

« Ազգային գրադարան »



NL0074227

